




ՈՉ-ՅԱՐԱՆՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Բ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1940

ԹԻԻ 8



«Իրարու հետ բաղդը եղեմ . . . » (Նվեա. 4, 32)

Եւրոպայէ, պատերազմի ժխտին ու որոններուն հետ, կրօնական արքունիքի ու քաղաքացիական անմասն լուրեր կը հասնին, եւ Աւերիկեան քերթերու կողմէ կ'ընդունուին՝ իբրեւ քանձաւոր մը քիւնը ճեղքող յոյսի նշոյշներ։ Երկու շաբաթ առաջ «Ն. Ե. Թալլզ»-ի մէջ երեւցած հեռագիր մը կը հաղորդէր, որ Ֆրանսայի ու Գերմանիոյ մէջ եկեղեցիները կը շնորհիւ խառն քաղաքական, ոչ միայն Կիրակի, այլ նաեւ հասարակ օրեր։ Աւանդաբար քաղաքացիական շաբաթ մէջ ալ նոյն երեւոյթը կը տեսնուէր, սովորական ժամանակներէ աւելի մեծ քաղաքներէն ներկայ կը գտնուէին եկեղեցական պաշտամանք։ Յատկապէս դիտել կը տեսնուէր, որ կրօնական ջանքերը շնորհիւ քաղաքացիական շաբաթ մէջ ալ նոյն երեւոյթը կը տեսնուէր, սովորական ժամանակներէ աւելի մեծ քաղաքներէն ներկայ կը գտնուէին եկեղեցական պաշտամանք։ Յատկապէս դիտել կը տեսնուէր, որ կրօնական ջանքերը շնորհիւ քաղաքացիական շաբաթ մէջ ալ նոյն երեւոյթը կը տեսնուէր, սովորական ժամանակներէ աւելի մեծ քաղաքներէն ներկայ կը գտնուէին եկեղեցական պաշտամանք։

Այս մասին տեսնուած տեղեկութեանց համաձայն, Ֆրանսայի մէջ ուր կը խորհուի քի կրօնի վաղուց իր յարգը կորուսած է, շարժումը աւելի երիտասարդական հանգամանքներէ, երեցները որոշապէս անհարթ են. իսկ Գերմանիոյ մէջ, ուր վերջին տարիներու ընթացքին պետութեան կողմէ յարատեւ ջանքեր կ'ընեն՝ հեքսագոնական կարգերն ու քաղաքացիական շաբաթ մէջ ալ նոյն երեւոյթը կը տեսնուէր, սովորական ժամանակներէ աւելի մեծ քաղաքներէն ներկայ կը գտնուէին եկեղեցական պաշտամանք։

Եկեղեցիին մէջ անհոյս պատեան կը գտնուէր կը կազմուէր ու կը գործնայ հոգեւոր միաբարութեամբ։

Ահաւասիկ իրողութիւններ, որոնք նշանակալից ու ներշնչող են։ Միշտ կը շնորհակալ լինեմք քի կրօնի դարուն մէջ քաղաքական արժեքներ կորուսած են իրենց խնամքն ու ուժը, նիւթական է որ կը տեսնուի աւանդներն ու կը վարեւ մարդոց կեանքը։ Պատերազմի երկրներու մէջ ծառայող կրօնական արքունիքներն եւ դիպի եկեղեցին շարժումը, կը յայտնեն քի անհիւսիսական հաւատքն ու գործընկեր կենդանի կը մնան ու կը ներգործեն միշտ ժողովուրդներու հոգեւոր խորք, կը հակադրեն նիւթապաշտական լուսնաշնորհներն ու պատերազմներու արհաւիրքին մէջ պիտի կործանի ներկայ ֆալսաւորութիւնը, եւ քոյր կու տան յուսալ մարդկութեան ապագային, կը գրէ «Հայաստանի Կոչման»։

Այսօր կեանքի մէջ աւելի մեծ պէտք մը չկայ քան այն պէտքն որ բարոյական եւ հոգեւոր բաշտութիւնն է դիմագրաւելու կեանքի մեծ հարցումով մը «Շիւս»-ի է անիկա»։

Ճ. Կ. ԲՈՒՆԵՑ

Դուռն կրնա գտնել բողոք մը առանց պարտաւոր, դժգոհ, առանց պաշտի եւ քաղաքական, սակայն չեն կրնար գտնել բողոք մը առանց քաղաքական։

ՓԼԻԻԹՈՐԻ

Եթէ Աստուծոյ ինքն կենդանի իրականութիւն մը չէ, ի՞նչպէս Ան ինքզինքն կրնայ յայտնել ուրիշներուն ինքնով։

ՃՕՆ ՍԵՅԹԸՐ

Երգանքի օր մը պիտի ըլլայ ասիկա եթէ ապրուի Աստուծոյ հետ գիտական յարաբերութեան մէջ։

ՓՈՎԻՄՈՍ ՅՈՐԺ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՁԱՅՆ

ՈՉ-ՑԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արամատէր՝ Խ. Թ. ՍՍ.ՐԵՍ.Ն. —:— Propr. Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ՝
Վ.Խ. Խ. Թ. ՍՍ.ՐԵՍ.Ն.
Վ.Խ. Թ.ԷՌՏՈՐ Ե. ՏՍ.Ղ.Լ.ԵՍ.Ն.
Պ. Կ. Ե. Թ.ՈՒՄԵՍ.ԵՍ.Ն.

Բ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1940

ԹԻԻ 8

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՐ ՀԱՒԱՏՔԵՆ Է

Որքան ալ ինկած ըլլալ մեկը, դարձեալ անոր ներսիդին կայ միտում մը դէպի բարիին ու աղէկին: Այս կէտք բնականօրէն մեզի խորհիլ կու տայ թէ ի սկզբան բարի ստեղծուած մարդուն վրայ թեմամի մը կողմէ մեծ նախնի մը գործուած է: Մարդը իր ինկած այս վիճակին մէջ կը նմանի փլուզումի մասնուած այն աւերակներուն, որոնք վկաներ կ'ըլլան երբեմնի հոյակապ շէնքերուն կամ ճին քաղաքակրթութեան հրաւակներսներուն: Այսպէս մարդը Աստուծոյ պատկերովը կամ նմանութիւնովը՝ «արդարութիւնով եւ նեմարիս սրբութիւնով» ստեղծուած էակը, ունեցած ըլլալով ահաւոր անկում մը, մերկացած իր արդարութեանն ու սրբութեանն՝ կը ներկայացնէ աւերուած պատկեր մը: Այլեւս մարդը արդար չէ, այլ անօրէն ու ամբարիտ, սուրբ չէ, այլ պիղծ եւ անմաւոր: Կարօք կը քաշէ նախալինակին, սուրբ կ'ընէ իր կորուստին: Ճիգ կը քաշէ վերստանալու կորուսածը, սակայն ի գուր, չի կրնար հասնիլ իր նպատակին:

Արդիւնքը վերցնելու համար պէտք է պատճառը վերցնել: Մեղքը եւ Աստուծոյ դէմ անհնազանդութիւնը պատճառ եղաւ որ մարդ կորսնցնէ իր արդարութիւնը: Մարդիկ ընդհանրապէս կարծես գիտակից են այս նեմարտութեան, որովհետեւ կը դիմեն զանազան միջոցներու դարմանելու համար այս մեծ կորուստը: Մեկը իր մարմինը կը քանգէ, միւսը ահագին նիւթական զոհողութիւններ յանձն կ'առնէ, ուրիշ մեկը իր խղճին ահաւոր ձայնը լռեցնելու համար կը դիմէ մարդկային զոհեր ընելու քարէ, խաւովէ աստուածներուն, երկնային մարմիններուն եւ երկրի գազաններուն, սակայն դարձեալ կարելի չըլլար զԱստուած գոհացնել, խիղքը հանդարտեցնել, սիրտը մեղքէն՝ այդ օտար տարրէն մաքրել: Մեղքը վարակած է զիրենք անբուժելի ախտի մը նման, փակած է չբաժնուելու պայմանով: Աստուծոյ խօսքը կ'ըսէ. «Ով որ չի գործեր», սակայն մարդը անդադար կը գործէ իր փրկութեան համար: Կ'ուզէ զայն

զենել իր դրամովը, կամ շահիլ իր բարեգործութիւններովը յաւիտեանական կեանք: Բայց մարդիկ մի անգամ ընդ միւս պէտք է դադարին խորհելէ քե երկնային բարիքները կրնան փոխարինուիլ աշխարհի ո՛ր եւ է մէկ բանի հետ: Մարդկային բոլոր ջանքերը պզտիկ մեղմ մը իսկ չեն կրնար վերցնել, աշխարհի բոլոր գանձը չի կրնար փրկութիւնը ծախու առնել եւ բոլոր բնաւորականները (*laboratory*) մեղմ մը իսկ չեն կրնար սրբել: Այս բանը, այնքան անկարելի է, որքան երթովպացիին՝ իր մօրքը, ինձին՝ իր գոյնը եւ խայտուցները փոխելը, կամ բորոսի մը՝ բուծել իր գարեհոտ մարմինը: Ի՞նչ պէտք է ընել ուրեմն: Շատ պարզ է մարդուն ընելիքը. միայն հաւատա՛ւ Անոր որ ամբարիշտը կ'արդարացնէ, նորէն արդար կ'ընէ եւ արդարութիւնը կորուսած մարդը կը սրբացնէ Յիսուս Քրիստոսի խաչին վրայ քափած քանկագին արեան շնորհիւր: Հետեւեալ օրինակը աւելի կը բացատրէ մեր միտքը: Օր մը հաւակով ծովու վրայ ճամբորդող մէկը յանկարծ հոսանքի մը մէջ կ'իյնայ, որ զինքն անդի-մադիւրի ուժով մը կը սանի վտանգաւոր տեղեր: Կը քիավարէ, իր բոլոր ուժն ու հմարամտութիւնը կը գործածէ, սակայն իր ամեն ջանքերը անօգուտ կ'անցնին: Ծովափէն՝ ուրկէ զինքն մարդիկ կը դիտէին, տեսան իր վտանգը եւ անմիջապէս իրեն չուան մը հասցուցին: Հիմա ի՞նչ պէտք է ընէ նաւակին մէջ հոսանքէն փոխած, մահուան սպառնալիքին տակ զգնուող մարդը: Տակաւին պէ՞տք է որ կտոյ՛ի մնայ իր քիին ու հաւակին, ապաւինի իր անձնական ուժերուն: Ո՛չ անցուտ. ասիկա պիտի ըլլար յիմարութիւն մը առաջին աստիճանի: Շատ պարզ է իր ընելիքը. միայն չուանը բռնել եւ հանդարտ կենալ որպէսզի ծովեզերք զգնուողները զինքն փաշտեն ու ազատեն:

Ո՛վ մեղմով վարակուած, արդարութիւնն ու սրբութիւնը կորուսած մարդ, անա՛ ընելիքդ: Տերը իր անհուն սիրոյն մէջ տեսաւ քու վտանգդ, մահուան դաշնապարտութիւնդ: Ինքն կրեց այս դաշնապարտութիւնը իր անձին վրայ, որպէսզի քեզի համար պատրաստէ այս փրկութիւնը: Քեզի կ'առաջարկուի այս փրկութիւնը բոլորովին ճշիւ, ո՛չ գործով (Հռովմ. 4. 5), ո՛չ ալ դրամով (Ա. Պետ. 1. 8), այլ իբր շնորհիւ. այո՛, իբր պարգեւ մը Աստուծոյ: Այն մահուան վտանգին մէջ, որ քու կը եր, քեզի կը նետուի փրկութեան այս չուանը: Բռնէ զայն. քու հաւատքդ պիտի ընէ ասիկա: Նետէ՛ ինքզինդ Տերոյդ բազուկներուն մէջ, որ կ'սպասէ քեզի անհամբեր: Ի միտ ունեցի՛ր որ քու ամենալաւ գործերդ պիտի են իր առջեւ: Աբրահամ հապտոց, այս սեպուեցաւ իրեն արդարութիւն: Բանապետը հաւատաց եւ փրկուեցաւ ամբողջ տունովը: Դուն ալ հաւատա՛ւ ո՛չ քու եկեղեցիիդ, ոչ պաշտօնեայիդ, ոչ բարի գործերուդ կամ ջանքերուդ, ա՛յլ Յիսուսի, որ կ'արդարացնէ ամբարիշտը. անա՛ պիտի փրկուիս:

Խ. Թ. Ս.

ԱՊՍՏՈՒԹՅԱՆ ՄԷ

Մեր հոգին շրջապատող ամենէն քանձ խաւարը՝ վիշտը, փորձութիւնը եւ կորուստը չէ, այլ անկարողութիւնը ըմբռնելու Աստուծոյ մօտութիւնը: Սակայն որքան ապահով չեն ճանոնք որոնք իրենց անձերը կրնան յանձնել իր խոստումներուն վրայ իր հետք ըլլալու, եթէ նոյնիսկ չուրբուտ մէջէն ալ անցնին: Եւ ի՞նչ հրաշալի տէ՛ւ մը կը լեցնէ՛ իրենց սրտերը, որոնք փորձաւորութիւնը ունին Հոգիին մեծ խաղաղութեան գոյ իր ներկայութիւնը կ'ստեղծէ:

Ճ. ՍԹՈՒԱՐԹ ԶՈՒՅՔՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ

Անանկ կ'երեւայ թէ՛ շատերուն համար գործնական կրօնքը իր բնութեամբն ու նպատակովը շատ թերի է։ Յաճախ տեսնուած է թէ՛ երբ անհատ մը կը յանդիմանուի իր ըրած խարդախ մէկ գործին համար, անմիջապէս ընդմիջած է ըսելով՝ թէ «քրիստոնէութիւնը ինչ գործ ունի վաճառականութեան հետ»։ Այսպիսի խօսք մը անշուշտ, անոր կամ կեղծաւորութիւնը և կամ ալ տգիտութիւնը ի յայտ կը բերէ, և երբեմն երկուքն ալ։ Անոր ապրած կեանքը այնպէս ցոյց կուտայ թէ՛ քրիստոնէութիւնը որեւէ կապ մը չունի շուկայի գործին, ընկերային և ընտանեկան կեանքին հետ, և նոյնիսկ իր նկարագրին հետ։ Այս գոտակարգի մարդոց համար կրօնքը լոկ համոզումի խնդիր մըն է, բողոքացած ըլլալով կարգ մը արտաքին արարողութիւններէ, որ միայն կը պատկանի եկեղեցոյն, և որուն պաշտօնն է մարդոց սորվեցնել եկեղեցիին մէջ արարողութիւններուն հետեւելու և երբեմն անոնց մասնակցելու կերպերը, և զայս ընելով կը կարծուի թէ՛ կրօնքը ծառայած կ'ըլլայ իր նպատակին։

Սակայն կա՞յ որ եւէ գրութիւն մը որ քրիստոնէութեան պէս սկզբունքով մնայուն և անփոփոխ, ու բնութեամբ տիեզերական ըլլայ։ Անիկա մեր վրայ ազդեցութիւն գործելու է ոչ թէ միայն եկեղեցիին մէջ կիրակի և առնական օրերուն, հապա տմէն տեղ և ամէն ժամանակ։ Ինչպէս որ քրիստոնէութիւնը կը սորվեցնէ մեզի աղօթել և Ս. Դիրք կարդալ, նոյնպէս ալ պէտք է սորվեցնէ ինչպէս պէտք է առուարար ընել որպէս

քրիստոնեայ։ Յիրաւի անիկա երկնային է ծագումով, սակայն սահմանուած է առաջնորդելու և ուղղելու մարդիկը իրենց երկրաւոր կեանքի ըստ մանրամասնութիւններուն մէջ։

Քրիստոնէութիւնը հաւատացեալին հոգեւոր հազուստն է, որ իրեն հետ ամէն տեղ պէտք է երթայ։ Որպէս մարդ նկատի առնենք մեր գիրքը։ Բազում պարագաներով կապուած ենք մարդկային ընկերութեան և անոնց հանդէպ պարտականութիւններ ունինք կատարելու։ Ահա այս կերպով ստեղծուած յարաբերութիւններով առիթներ կ'ընծայուին մեզի ցոյց տալու անոնց մեր գործնական քրիստոնէութիւնը։ Եթէ եկեղեցին իրաւունք ունի փորձի ենթարկելու մեր կրօնքը, նոյնքան և աւելի ընկերային կեանքը։ Ուստի Աստուած նկատի կ'առնէ ոչ թէ միայն եկեղեցիին մէջ հաւատացեալներուն հետ ունեցած մեր յարաբերութիւնները, հապա նաեւ աշխարհի մէջ ոչ - հաւատացեալներուն հետ ալ մեր ունեցած յարաբերութիւնները։ Ուրեմն քրիստոնեան հարկ է «բարի վկայուած» ըլլայ ամէն տեղ և միշտ։

Կան շատեր որոնք կը փնտռեն ներկայ գտնուելու կիրակի օրուան պաշտամունքներուն, կը գործադրեն իրենց կրօնական պարտականութիւնները։ Ներկայ կ'ըլլան աղօթումովներուն, կը կատարեն իրենց ընտանեկան աղօթքը և կը վճարեն իրենց հոգեւոր առարքը։ Կերպով մը կատարեալ են անոնք Աստուծոյ հանդէպ իրենց ունեցած բոլոր պարտականութիւններուն մէջ։ Շարունակ հոգեւոր բաներու մասին ալ կը խօսին, սակայն հոն կանգ կ'առնեն։ Երբեք նկատի չեն առնել և միեւնոյն տան կարեւորութիւն չեն տար մարդոց հանդէպ իրենց ունեցած պարտականու-

թիւներու: Անհոգ են աշխարհի մարդոց հետ իրենց ունեցած վարձուքին և վարուելակերպին մասին: Անոնց հետ անբարեկիրթ ու անքաղաքավար կերպով կը վարուին: Իրենց հետ չի համաձայնողները կը քննադատեն, և կերպով մըն ալ ատելութիւն ցոյց կու տան անոնց դէմ: Այսպիսիներուն համար քրիստոնէութիւնը խօսք է և ոչ գործք: Զայն որպէս գիտութիւն ամբարած են իրենց մտքին մէջ, և ոչ իրենց սրտին մէջ որպէս կեանքի փորձառութիւն:

1. Քրիստոնէութիւնը պէտք է հաւատացեալին սորվեցնէ, թէ ինչպէս պէտք է զսպել իր անձը:—

Տեսնուած է թէ՛ ոմանք այն աստիճան կը բարկանան որ այլեւս իրենք իրենցմէ կ'ելլեն, և անբնական վիճակներ տանելով՝ կ'սկսին դողդալ: Այս մեղքը արդարացեալու համար կը վերագրեն զայն ջգոյին տկարութեան: Այդ բարկութեամբ ինչպէս կորելի է սիրել մարդիկ: «Սէրը բարկութեան չգրգռուիր» կ'ըսէ Աստուծոյ խօսքը: Եթէ զԱստուծոյ կը սիրենք ճշմարտապէս բնական է որ մարդիկ ալ կը սիրենք: Կարելի է այդ վիճակով Աստուծոյ սէրը, Քրիստոսի շնորհքը և Սուրբ Հոգւոյն աղանձական անմեղութիւնը ցոյցնել ուրիշներուն: «... Զեր վրայ հազեմ զուրբ, ողորմութիւնը, բաղցունքիւնը, խոնարհութիւնը, հեղութիւնը, երկայնամտութիւնը...: Եւ այս ամէն բաներուն վրայ սերը հազեմ, որ կատարելութեան կապն է» (Կող. 3. 12-15):

2. Հաւատացեալը իր քրիստոնէութիւնը պէտք է ցոյցնէ իր առօրեայ գործին մեջն ալ:—

Կապաշտ Չինացիները կը պահեն իրենց կուռքերը ոչ թէ միայն տաճարներուն մէջ, հապա իրենց խա-

նութիւններուն մէջն ալ, որպէսզի անոնց ներկայութեան կարեւորագոյն կեանք մը ապրի: Ասով կ'ուզեն ցոյց տալ թէ՛ կրօնքը միայն տաճարին յատուկ բան մը չէ, այլ միշտ և ամէն տեղ պէտք է ըլլայ, նոյնիսկ խանութին մէջն ալ: Հոն, իրենց յաճախորդներն ալ պէտք է տեսնեն իրենց կրօնատիրութիւնը: Եթէ հեթանոսները այսպէս հաւատարիմ են իրենց կրօնքին, հապա քրիստոնէաները որքա՞ն աւելի պէտք է ըլլան:

Ոմանք առիթ չունին քեզ ու քու քրիստոնէութիւնդ տեսնելու եկեղեցիին մէջ, անոնք պատահութիւն չունին լսելու քու աղօթքդ, հապա կը տեսնեն քեզ քու խանութիդ մէջ և որպէս գործի մարդ: Ուստի կրցա՞մ ես անոնց ցուցնել ինքզինքդ որպէս քրիստոնէական սկզբունքներու տէր մէկը: Մարդիկ կրնան հասկնալ մեր քրիստոնէութիւնը մեր առօրեայ գործերուն մէջ, և պզտիկ թերութիւն մը կրնայ աւելի մեր քրիստոնէական բարի համբաւը պատճառելով մեծ դայթակղութիւն:

3. Հաւատացեալին քրիստոնէութիւնը պէտք է երեւայ իր ընտանեկան կեանքին մեջն ալ:—

Քրիստոնէայ ընտանիք մը բնական կերպով ուրիշ ընտանիքներէն բոլորովին տարբեր պէտք է ըլլայ: Հոն, այդ ու կին պէտք է իրարու հետ սիրով ըլլան, իսկ ծնողները՝ ազնիւ և իմաստուն իրենց զաւակներուն հանդէպ, և արթուն իրենց պարտականութիւններուն մէջ: Զաւակները պէտք է ըլլան յարգող, հնազանդ և պարտաճանաչ: Տէրերը ազնիւ և արդար պէտք է վարուին իրենց ծառաներուն հետ: Մեր ծառաներն ալ պէտք է տեսնեն մեր քրիստոնէութիւնը: Իսկ անոնք ալ պէտք է ըլլան հա-

զանք, հաւատարիմ և վատահիշի:

Յիրաւի, քրիստոնէութիւնը լոկ աղօթք ընել, Ս. Գիրք կարդալ և սոսոնց նման կարգ մը պարտականութիւններ կատարել չէ, հապա ինչպէս որ արիւնը շրջան կ'ընէ մարմնի բոլոր երակներուն մէջ ստեղծելով կեանք, նոյնպէս պէտք է քրիստոնէութիւնը շրջան ընէ մեր կեանքի բոլոր մասնաւորականութիւններուն մէջ ստեղծելով մեր մէջ հոգեւոր կեանք:

Երբեմն տնտրական ձեւով մը կը լսենք ուրիշներէն «Այս է ձերին կըրօնքը»: Հաւատացեալը պէտք չէ տեղի տայ այսպիսի դիտողութիւններու: «Այնպէս թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջև, որ աւանդին ձեր բարի գործերը, ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է»:

Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ՏՈՔԹ. ԹՕՐՐԻԻ

ԱՐԹՆՈՒԹԵԱՆՑ ԴՐՈՒԱԳՆԵՐԷՆ

Շարժումը տեղի կ'ունենար Ամերիկայի Ֆիլատելֆիա քաղաքին մէջ, որ սմբողջութեամբ բռնուած էր կրակէն: Ո՛ւր որ քանի մը մարդիկ կը հանդիպէին իրարու, հանրակառքերու, խանութներու և այլ տեղերու մէջ, միշտ կը խօսուէր սոյն հոգեւոր արթնութեան վրայ: Մինչև իսկ քաղաքականութիւնը մոռցուած էր, և դադարած խօսակցութեան նիւթ ըլլալէ: Արթնութեանց տեղի ունեցած շրջաններուն մէջ զանազան ոտակոսական պաշտօնականները կ'ըսէին թէ յորմէհետէ այդ արթնութիւնը ակառ մենք այլեւս ընելիք գործ չունինք: Դատաւորները պարտաւ կը նստէին, դատաւորական գործ չկար: Գինեվա-

ճառները կը աւանդէին որ իրենց գործը օրէօր կը գէշանար, և իրենց նախկին եկամուտին երեսք չորրորդը պակսած էր, որովհետեւ յաճախորդները գինեւորու զալու տեղ կը յաճախէին Տօքթ. Թօրրիին ժողովները:

Թօրրիի քարոզութիւնը կը հասնէր մինչև ամենահեռուոր շրջանները: Ուղղակի կը խօսէր 5500 հոգիներու ընդարձակ սրահի մը մէջ, բայց մամուլի միջոցաւ աւետարանը կը հասնէր հարիւր հազարաւորներու, և հարիւրաւորներ դարձի կու գային: Աւետարանի տարածման ուրիշ մէկ միջոցն ալ ձայնասփռու էր, զոր ընկերութիւնը դրած էր ժողովարանին մէջ, որուն միջոցաւ Շիգակո և ուրիշ քաղաքներուն մէջ անթելով շատեր կրնային լսել Թօրրիի քարոզները և Աղեքսանդրի երգերը:

Աստուծոյ զօրութիւնը կը թափուէր Ֆիլատելֆիայի վրայ և հրաշայի կերպով կը սարսէր քաղաքը, կարծես բոլոր մթնոլորտը լեցուած էր Աստուծոյ Հոգիով: Մարդիկ Փրկիչը կը գտնէին հանրակառքերու, կառուցմաբերու մէջ և ամէն տեղ: Հասարակութեան ամէն խաւերէն մարդիկ դարձի կու գային, օրաթերթներու աշխատակիցներ, ոստիկանական ծառայութեան մէջ գտնուողներ, գործակատարներ և այլն: Բօլիչի մը որ 19 տարիէ ի վեր Աստուծոյ խօսքէն հեռու կը կենար և որոշած էր իր կեանքին վերջ տալ, կը փրկուի Տօքթ. Թօրրիի ժողովներէն մէկուն մէջ: Փրկուածներն ալ իրենց կարգին կ'սկսէին հոգիներ շահիլ Տէրոջը համար, և այդպէս օրըստօրէ կրակը կը տարածուէր ոչ թէ միայն մինչև Ֆիլատելֆիայի բոլոր եկեղեցիները, այլ Փէնսիլվանիայի քաղաքը և համայնքները, և այս բանին քիչ չէր նպաստեր Աղեքսանդրին երգերը: Վաճառական մը

կու գոյ ուրիշ քողաքէ մը Տոքթ. Թօրրիի ժողովներուն, այնտեղէն երգի թերթիկներ գնելու: Կը պատմէ որ իրենց տեղը «Փառաց Երգ»-ի միջոցաւ 300 հոգիներ փրկուած են:

Թօրրի և Աղեքսանդր օրական երեք ժողով կը կատարէին, կէսօրին առեւտրականներուն՝ երաժշտական աւելակման մէջ, կէսօրէն ետքը, ժամը երեքին, յատկապէս Աստուծոյ զաւակներուն համար, իսկ երեկոյեան Յրդ զօրախումբի զօրանոցին մէջ: Այդ կերպով հոգեւոր շարժումը կը հասնէր հանրութեան բոլոր խաւերուն, և մարդիկը սկսած էին փնտռել իրենց Աստուծոյ:

Աստուծոյ այդ երկու ծառաներուն համար բաց էին ութը բարձրագոյն դպրոցներ և համալսարաններ, այնպէս որ անոնք պատեհութիւն ունեցան Աւետարանը լսելի ընելու ուսանողներուն՝ խօսքով և երգով:

Ժողովի մեծ սրահին վրայ ելեքտրաշող առներով զրուած էր իմացնող ժողովի եկող բազմութեան՝ թէ երբ սրահը լեցուած է, միեւնոյն ժամանակ ուշ մնացողներ ո՛ւր պէտք է երթան յաջորդ ժողովի համար: Միայն մէկ օրուան մէջ 520 հոգի յանձնուեցան Փրկչին:

Ոստիկանական բարձրաստիճան պաշտօնեայ մը նոյնպէս փրկուած էր, և սկսած իր կարգին պարզ վկայութիւնը տալու իր բարեկամներուն քով Փրկչին համար, և գործած է նաեւ լրագիրներու միջոցաւ նոր գտած Տիրոջ համար: Եւ զարմանալին այն է՝ որ քանի ոստիկանութեան ծառայութեան մէջ գտնուողներ իր միջոցաւ նոր արարածներ դարձան: Մինչեւ անգամ Ծիլատեղիի փոքրիկները կ'աշխատէին Փրկչին համար հոգիներ չահելու: Մը. Աղեքսանդր ժողովի մը մէջ կը պատմէ հետեւեալը. — «Երէկ

կէսօրէ ետքը մարդ մը եկաւ հոս քաղաքը լսելու համար: Եիշը գրպանը ունենալով երբեմն երբեմն դուրս կ'ելլէր կոնձելու համար, բայց միշտ կրկին կը վերադառնար ժողովին և այդ ժողովը չվերջացած այդ մարդը Քրիստոսի յանձնուելով փրկուեցաւ: Ան ինծի պատմեց որ խմիչքի գերի էր ինքը, երէկ իր չորսուկէս տարեկան տղուն հետ պտոյտի կ'ելլէ, չիշը գրպանը ունենալով, Յանկարծ փոքրիկը կանգ առնելով կ'ըսէ. «Հայրիկ, ինչո՞ւ Յիսուսը չես ընդունիր, Ան քեզի պիտի օգնէր և դուն այլեւս օղի պիտի չուզէիր խմել»: Մարդը ըսաւ. «այլեւս այս խօսքը չկրցայ մոռնալ և եկայ այստեղ»: Վերջը Աղեքսանդր շարունակելով կ'ըսէ. «Թէպէտ տղան շատ փոքր էր քարոզելու համար, սակայն և այնպէս այդ պարզ քարոզը իր հայրը առաջնորդեց Քրիստոսի»:

«Բարի Լուր»

ՀՈԳԻՈՅՆ ԼԻՈՒԹԻԻՆԸ

Գրեց՝ ԻՆՎՈՒՏ

(Գործ. 9. 17)

(Շար. Գալտոյ քիւէն)

3. Կարելի է յանկարծակի լեցուիլ Սբ. Հոգիով. — Այդպիսի սուրբ բանը պէտք չէ վիճարկութեան նիւթ ընել, բայց պիտի ուզէի ըսել որ Գործք Առաքելոց գրքին մէջ Հոգեւով լեցուելու դէպքերուն մէջ չենք տեսներ հոտ մը որ յանկարծակի եղած չըլլայ: Պէնտէկոստէի օրը յանկարծակի եղաւ, 4րդ գլխուն մէջ յանկարծակի եղաւ, Ստամբուլի հաւատացեալներուն համար յանկարծակի եղաւ: Սաւուղի պարագային, Կոնստանդնուպոլիս տան մէջ զըտ-

նուող հեթանոսներուն համար, յետոյ եփեսացիներու համար յանկարծակի տեղի ունեցաւ Վերի յիշուածներ ժողովի եկած էին առանց Հոգիով լեցուած ըլլալու. և սակայն Հոգիով լեցուեցան մինչեւ ժողովին վերջանալը — և ասիկա քանի մը պարագաներուն՝ ազօթաժողով էր:

Ուրախ ենք ըսել կարենալու համար անդարձներուն՝ թէ փրկութիւնը ընդունելու համար պէտք չէ ժամ մը իսկ սպասել: Կ'ուրախանանք անոնց ըսելու՝ թէ թէեւ մեր ժողովներուն եկած են որպէս օտարականներ և օտարացած Աստուծոյ քաղաքացիութենէ, այսուամենայնիւ զեռ տուներնին չգացած Տէրը կրնայ փոխել և նորոգել զիրենք: Կ'օրհնենք զԱստուծոյ այդ արտօնութեան համար որ կրնանք քարոզել անմիջական փրկութիւն մը, որով կարելի է իսկոյն փրկութիւն: Բայց նոյնպէս ճշմարիտ է և նոյնքան մեծ ուրախութիւն մեզի համար հռչակել թէ՝ Տէրը իր շնորհքով, կարողութիւնով և ողորմութիւնով կարող է իր Սբ. Հոգիով յանկարծ լեցնել այն փրկուածները, որոնք դեռ լեցուած չեն:

4. Մեքե կրնանք գիտնալ Սբ. Հոգիով լեցուած ըլլալնիս. — Ինչպէ՞ս. ո՛չ թէ խաղաղութեան, զօրութեան կամ ուրախութեան մէկ նոր զգացումով — թէպէտ այդ սմէնը կրնայ ըլլալ — այլ այս բոլորէն գերազանց Աստուծոյ վրայ ունեցած մէկ նոր և յաղթանարող զգացումով, այն ահաւոր և սակայն փառաւոր գիտակցութիւնով, որ Աստուծոյ վերջապէս տիրացաւ մեր էութեան սմբողջ տաճարին:

Այո՛, ասիկա կարելի է, սակայն պայմաններու մասին խօսելէն առաջ պէտք է յիշել տամ որ Հոգւոյն ներքնակութեան եւ լեցունութեան գիտակցութիւնը հաւասարապէս զօրաւոր չէ

բոլոր բիւսոնեաներու արժն մեզ, ուրեմն պէտք չէ մէկը իր անձնական փորձառութիւնը բաղդատէ ուրիշին փորձառութեան հետ: Յետոյ, Հոգւոյն ներքնակութեան գիտակցութիւնը, Տէրոջը նուիրուած եւ հնազանդ միեւնոյն արժն մեզ միշտ միեւնոյնը չէ: Կը խնդրեմ որ այս շատ պարզ իրողութիւնները ի մտի ունենանք, որովհետեւ ասոնք կրնան պահել մեզ ինչպէ՞ շատ մը փորձութիւններու մէջ: Եւ այդպէս հիմը գնելէն ետքը, Կ'ուզեմ խօսիլ այն պայմաններու մասին, որոնցմով կարելի է ստանալ Հոգւոյն Սրբոյ լեցունութիւնը: Պէտք է իսկոյն յիշեցնեմ ձեզի որ, ասիկա սրտին և իր Աստուծոյն միջեւ եղած խնդիր մըն է և իւրաքանչիւր անհատ միայն Աստուծոյ հետ պէտք է կարգադրէ: Աստուծոյ օգնութեամբ Կ'ուզեմ տ'յնպէս խօսիլ երեք պայմաններու վրայ որ իւրաքանչիւր անօթի և ծարու հոգի կարենայ այժմ յայանել Աստուծոյ իր կարօտութիւնը:

1. Խոստովանութիւն. — Եթէ փրկութեան առեւն մեղքերուն խոստովանութիւնը մեզ ամօթով կը լեցնէ, նոյնպէս ամօթի և խոնարհութեան զգացումը կը տիրէ մեր վրայ լեցունութեւ համար խոստովանութեան առեւնը: Անոր համար Տէրոջս անուշով կը խնդրեմ ձեզմէ որ ազնուօրէն խոստովանելիք: Չորս բաներ կան խոստովանելիք: Աստուծոյն. «Ով Աստուծոյ, ամօթով և ցաւով կը խոստովանեմ որ չեմ լեցուած Քու Հոգիովդ, թէպէտ գիտէի որ պէտք էր լեցուէի»: Մարմնաւոր քրիստոնեայի մը հպարտ սերտին դէմ է այս խոստովանութիւնը: «Ով Աստուծոյ թէեւ ես Յիսուս Քրիստոսի Աւետարանին պաշտօնեան եմ, բայց և

այնպէս լեցուած չեմ Բու Հոգիովդ»։ «Թէեւ ես կիրականօրեայ դպրոցի ուսուցիչ եմ, բայց եւ այնպէս լեցուած չեմ Բու Հոգիովդ»։ «Թէեւ եկեղեցւոյ մէջ բարձր դիրք կը բռնեմ, բայց եւ այնպէս լեցուած չեմ Բու Հոգիովդ»։ «Թէպէտ առաք կամ քսան տարիէ Յիսուսը իբրեւ Փրկիչ կը ճանչնամ, բայց եւ այնպէս լեցուած չեմ Բու Հոգիովդ»։ «Ով Աստուած Բու ներկայութիւնդ կը փչրէ սիրտս, մինչ ես կը խոստովանիմ Բեզի թէ ես քրիստոնեայ եմ եւ Բեզի համար կը գործեմ, բայց եւ այնպէս լեցուած չեմ Բու Հոգիովդ»։ Եւ յետոյ այս խոստովանութեան մէջ սա ալ պէտք է մտնէ որ է երկրորդ խոստովանութիւնը. «Ով Աստուած յանցանքը իմս է որ չեմ լեցուած»։ Ազնիւ եղէք այս լուրջ խնդրոյն մէջ, պատճառը մի՛ վերադարձէք ուրիշին՝ թէ ձեզի ուղիղ չեն սորվեցուցած։ Եթէ դուն փրկուած ես, ուրիմն աստուածային կեանք ունիս քու մէջդ, Աստուծոյ խօսքը ձեռքիդ մէջ բռնած ես, Աստուծոյ Հոգին քեզի ուսուցիչ ունիս, եւ ուրիմն հասկնալու համար պէտք եղածը ունիս։ Եթէ դուն պատգամ չես լսած սոյն նիւթին վրայ, ոչ մէկ համազուտօր չես այցելած, կամ այդ մասին բան մը չես կարդացած, դարձեալ ուրիշ կերպ չես կրնար ընել, այլ պիտի ըսես. «Ով Աստուած, պատճառը միմիայն ես եմ, որ մինչեւ հիմա չեմ լեցուած Բու Հոգիովդ»։

Երրորդ խոստովանութիւնը կու գայ ասկից վերջը, որ նոյնպէս ցաւ կը պատճառէ սրտին. «Ով Աստուած, ես վերջապէս կը տեսնեմ որ երբեք իմ վիճակս ուղիղ պիտի չըլլայ մինչեւ որ չլեցուիմ Բու Հոգիովդ»։ Ես ոչ մէկ տեսն չեմ կրնար կատարելապէս յաղթել փորձութիւններուն, մինչեւ որ չլեցուիմ, ես իսկապէս բնաւ Գրիս-

տոսի նման չեմ ըլլար մինչեւ որ չլեցուիմ, եւ երբեք չեմ կրնար հասնիլ այն վիճակին որը Դուն ինծի համար որոշեցիր երբ զիս փրկեցիր, մինչեւ որ չլեցուիմ Ով Աստուած, այժմ կը տեսնեմ, լսեմ մը կայ իմ սրտիս մէջ, գործիս եւ կեանքիս մէջ, որ իր կարգին չէ, եւ հիմա կը տեսնեմ զայն ինչ որ մինչեւ հիմա երբեք տեսած չէի — անոնցմէ է սա՛, որ ես ամէն օր չեմ լեցուիր Սբ. Հոգիով»։

Յետոյ կու գայ չորրորդ խոստովանութիւնը. — «Ով Աստուած, ես կը խոստովանիմ որ, ի գին ամէն ինչի կ'ուզեմ լեցուիլ Բու Հոգիովդ, Կ'որելի է անիկա շատ սուղի ալ նստի իմ վրայ, գուցէ զիս մոլեռանդ անուանեն, գուցէ իմ գործակիցներս թողելով զիս հեռանան, գուցէ պաշտօնէս զրկուիմ եթէ քարոզեմ այդ Աւետարանը, բայց ով Աստուած, վերջապէս կը տեսնեմ, որ անիկա ինծի համար բոլոր խնդիրներուն պիտաւորն է, եւ վերջապէս իմ սիրտս կ'ըսէ, ինչ գնով ալ ըլլայ, ով Աստուած, ես կ'ուզէի լեցուիլ Սբ. Հոգիով»։

Եթէ դուն այս չորս խոստովանութիւնները ընես Աստուծոյ, բաց, ազնիւ եւ խոնարհ կերպով, տանք քեզի աւելի խոր վիշտ պիտի պատճառեն եւ պիտի խոնարհեցնեն քոն ուրիշ ո՛ր եւ է բան։ Հաւանաբար մեզմէ ոմանք ունին այդ փորձառութիւնը։ Բայց եթէ կ'ուզենք որ օրհնութիւնը մերը ըլլայ, պէտք է խոստովանինք։

2. Խոստովանութենէն ետքը կու գայ երկրորդ քայլը. «Ով Աստուած, հնազանդելով Բու պատկերիդ բոլորովին կը նուիրուիմ Բեզի, որ Դուն կարող ըլլաս զիս լեցնել Բու Սուրբ Հոգիովդ»։ Ասիկա ոչ թէ միայն կը նշանակէ զոհել ո՛ր եւ է բան Յիսուսի համար, կամ զոհել ամէն բան Յիսուսի համար, այլ աւելի բան կը նշանա-

կէ։ Ասիկա անձնանուիրումի բարձրագոյն մէկ արարքն է, և ասիկա կը կը պարունակէ ուրիշ ամէն բան։ Ասիկա կը նշանակէ անձը սեղանի վրայ դնել, և այդ սեղանը Տէր Յիսուս Քրիստոսն է։ Որովհետեւ քու անձդ որ կը մատուցանես, Ան չընդունիր եթէ չմատուցանես Տէր Յիսուսով։ Ուրիշ կերպով դուն Աստուծոյ չես կրնար մօտենալ, եթէ ոչ քու Փրկիչդ Տէր Յիսուս Քրիստոսով։ Եւ երբ այդպէս բոլորովին և անպայմանօրէն մեր անձը նուիրենք Աստուծոյ, մեր բոլոր էութիւնը դրուած կ'ըլլայ Յիսուս Քրիստոսի վրայ, որ Ինքը սեղանն է։

3. Այժմ կու գայ երրորդ քայլը. «Ով Աստուած, ես կ'ապաւինիմ քեզի, որ Դուն հաւատարիմ կը մնաս Քու խօսքիդ եւ ես կը համարձակիմ հաւատալ, որ Սբ. Հոգին այժմ բոլորովին կը տնակիմ քեզի»։ Շունչդ կը տրուած է և դուն կ'ըսես. «Ո՛չ, ասիկա չեմ կրնար ըսել, նոյնիսկ Աստուծոյ առջեւ չեմ կրնար ըսել։ Չեմ կրնար ըսել, որովհետեւ կ'զգամ որ լեցուած չեմ»։ Ո՛չ, դուն չես կրնար զգալ լեցուելդ մինչեւ որ լեցուիս, բայց ասիկա ամուր բռնէ — որովհետեւ ասիկա ժայռ մըն է, որմէ ինչպէս կ'երեւի, չառ վնասողներ գլորած են — ամուր բռնէ, որ Աստուած մեզի երբեք չտար զգացումներ, որոնց կարող տանք ապաւինիլ, կամ անոնք կարենան ցոյց տալ մեզի թէ մենք իսկապէս և կատարելապէս ապաւինած ենք Անոր Աստուած մեզի զգացումներ կու տայ այն տանի երբ տեսնէ որ մենք առանց ո՛ր եւ է զգացումի կը վստահինք Իրեն, հանգչելով Իր խօսմունքին և հաւատարմութեան վերայ։ Մինչ այն, անկարելի է որ զգացումը գայ, և Աստուած կու տայ զգացումը այն չափով և այն ժամանակ, ինչպէս Իր սէրը մեզմէ խրաքանչիւ-

րին համար օգտակար կը համարէ։

Ամուր բռնէ նաեւ սո՛ւ կէտը, ան ալ շատ կարեւոր է։ Կրնայ անցնիլ որոշ ժամանակ մը ընդմէջ Հոգին հաւատով ընդունելու եւ զիսկցաբար Հոգւով Սրբով լեցուելու։ Մենք կը նուիրուինք Աստուծոյ և յետոյ կ'անցնի ժամանակ մը, և Տէրը կու գայ և մենք կ'զգանք որ Աստուած լեցուց Իր տաճարը։ Այդ ժամանակը կրնայ կարճ կամ երկար ըլլալ։ Ես կը ճանչնամ մի քանիներ, որոնք իրենք զիրենք նուիրած են Տէրոջը, և ապաւինած հաւատքով Հոգւոյն լեցունութեան համար, ահա նոյն միջոցին Աստուած այնպէս առատօրէն լեցուցած է զիրենք Հոգիով որ անոնք անկարող եղած են խօսիլ Անոր ներկայութեան առթած փառքին առջեւ։ Դիտեմ նաեւ ուրիշներ որոնք նոյնպէս գիտակցաբար և լիովին յանձնած են իրենց անձերը, և նոյնպէս պարզ հաւատքով ապաւինած են օրհնութեան համար, տակաջն իսկոյն չեն ստացած Հոգւով Սրբով լեցուած ըլլալու գիտակցութիւնը։

(Վերջը յաջորդով)

Ձանք պիտի բնեմ քաղցր ըլլալու, եւ պիտի չբոյլաւորեմ որ անցեցող ոգի մը մեզէ իմ սիրտ։
Տիկ. ՃԵՅՄԱ ՍՓԻԼՄԷՆ

Սպիռնեմ առատօրէն եւ յաղթականօրէն այն զօրութեամբ զոր Աստուած կը հայրաբէր իր յաւիտեական Որդւոյն միջոցաւ։

Ա.Լ.ՊԷՐՔ ՏԻՄՁ ՊԵՑ

Աստուած մարդուն ստրկեցուց հագուստի մէջ իր մեկ կտրմիկը ծածկելու, իսկ Աստուած ստրկեցուց մարդուն խաբէութիւն հիւսել ծածկելու համար իր մեկ հոգին։ Այսու հանդերձ որքան հարպիկ ըլլաւ մեզի ծածկելու, այնքան աւելի աշխատակորէն խեղ կը ձեւացնէ ինքզինքդ։ Երբ ստախօսի սուտ երեւան ելլէ, ոչ մէկը իրեն չափ կը խաբի, ապահով եղիր որ դուն ալ այդպէս պիտի ըլլաս։

ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԵՐԱԶ ՄԸ

Ժամանակին երիտասարդ մը կար Միք անուանով: Հակառակ որ դեռ ինքը պատանի մըն էր, արդէն լուս դիւրք մը ունէր քաղաքի մը մէջ, և փայլուն ապագայ մը կը խոստանար: Մինչեւ այդ ատենը Կիրակի օրերը եկեղեցի կը յաճախէր, կը կարդար իր Սբ. Դիրքը, անուանով քրիստոնեայ մըն էր:

Այժմ հասած ըլլալով կատարեալ երիտասարդութեան, Միք սկսաւ ինքնիրեն այսպէս խորհիլ, «Այլեւս ժամանակ է, որ աւելի քիչ ուշադրութիւն տամ կրօնքին և աւելի ժամանակ նուիրեմ գործիս և սփօրին: Կրօնքը, կ'ըսէր ան ինքնիրեն, աղէկ է մանուկներուն, ծերերուն և պառաւ կիներուն: Ինծի պէս երիտասարդները, ժամանակ չունին այսպիսի լուրջ բաներու համար: Դեռ երիտասարդ եմ, պէտք է նախ կեանքի մէջ յաջողիմ, տակաւին շատ ժամանակ կայ խորհելու կրօնական ինդիւրներու վրայ»: Այսպէս խորհելով Միք ինքնեքեք կ'ըսէր ինքն ինք: «Այդպէս»:

Շատ չոնցած, իրականութեան համապատասխան երազ մը տեսաւ Միք: Երազին մէջ տեսաւ իր առջեւը, եօթնասուն տարեկանի մօտ ծերունի մը, որուն գէմքին վրայ կարծես մօխիւր ցանկաւ էր: Միք կարծեց թէ կը կծկուէր և սկսաւ զոգալ ամբողջ մարմնով:

«Ո՞վ ես դուն, թոթովեց Միք, չեմ կարծեր որ քեզ երբէք ճանչցած ըլլամ»: Այն ատեն ծերունին պատաս-

խանելով ըսաւ, «Միք, ես դուն եմ, ասկից յիտեն տարի ետքը, եթէ չփոխես այս ճամբադ»: Յետոյ ան իր նիհար և ռակրտ մատովը մատնանիչ ընելով հարցուց, «Միք կը տեսնե՞ս անդիւր փապուղին»:

— Այո՛, կը տեսնեմ:

— Հաւ, այդ փապուղին քու կեանքդ կը ներկայացնէ, եթէ ընթացքդ չփոխես: Եկո՛ւր ինծի հետ, միասին պիտի քալենք գէպի այդ ներքնուղին:

Երբ կ'երթային, Միք նշմարեց պլպլացող լոյսեր փապուղին ի վար: Երբ որ հոն հասան տաշին լոյսին, անոր տակը տեսան տախտակ մը, որուն վրայ գրուած էր խոշոր գիրերով: «Աստուծոյ Խօսքը»:

Այն ատեն ծերունին ըսաւ. «Միք դուն կ'ըսես որ Սբ. Դիրք կարդալու ժամանակ չունիմ: Անիկա ժամանակավրէպ, մօտան անցած գիրք մըն է: Ուստի մենք պիտի մօրենք այս լոյսը»: Եւ մօրեց զայն:

Յետոյ վերսկսան իրենց ճամբան և քալելով փապուղին մէջէն հասան երկրորդ լոյսին: Այս լոյսին ներքեւ ալ գրուածը այս էր. «Աղօթք»:

Ծերունին ըսաւ. «Միք, ժամանակ մը կար, որ առտու և իրիկուն աղօթքդ կ'ընէիր, սակայն այժմ աղօթքը հետաքուցած ես քու կեանքդ, հետեւաբար այս լոյսն ալ պիտի մօրենք»: Եւ մօրեց զայն:

Երկուքը միասին քալել շարունակեցին ներքնուղին մէջէն, որը հետզհետէ աւելի խաւար կը զառնար: Քիչ յետոյ եկան երրորդ լոյսի մը: Այս լոյսին տակն ալ կար տախտակ մը, որուն վրայ կը կարդացուէր. «Տերոջը Օրը»:

«Միք, ըսաւ դարձեալ ծերունին, ժամանակ մը կար որ դուն կը յար-

գէիւր Կիրակին և զայն կը կոչէիւր Տիրոջ Օրը: Հիմա դուն հաճոյքդ կը փնտռես այն օրը և ո՛չ զԱստուած: Կիրակին այլեւս քեզի իբր նուիրական օր անցեալին կը պատկանի: Դուն կը վատնես անոր թանկագին ժամերը մարմնամարզական խաղերով, սինէմա երթալով և ուրիշ կասկածելի ժամանցներով: Հետեւորար այս լոյսին ու պէտք չունինք այլեւս»: Եւ մարեց այդ լոյսն ալ:

Շուտով հասան վերջին և չորրորդ լոյսին: Ասոր տակն ալ գրուած էր. «Ասուծոյ Տունը»:

«Ո՛հ, ըստե՛ս ծերունին, տանն մը կար որ կը սիրէիւր Աստուծոյ տունը երթալ, մասնակցիլ երգեցողութեան և Աստուծոյ ժողովուրդին հետ պաշտամունք կատարել: Ան ալ մոռցուած է այժմ»: Եւ մարեց այն լոյսն ալ: Փապուղին հիմա չօջափելի կերպով թանձր խաւոր էր:

Ժիշդ այս միջոցին Միք ընդոստ արթնցաւ և հասկցաւ թէ երազ էր: Այս երազը, սակայն, որ իրապէս իր կեանքը կը նկարագրէր, պատճառ եղաւ իր դարձի գալուն: Այսօր ան՝ օտար երկիր գացած է, խաւորի մէջ բնակողները առաջնորդելու Յիսուս Քրիստոսի՝ որ աշխարհի լոյսն է:

Ան շատոնց գաած է կեանքի երջանկութեան դաղանիքը, և այժմ իր տաղանդն ու ժամանակը իր Տիրոջը նուիրելով շատ աւելի երջանիկ է քան ինքը կը խորհէր որ կարելի էր ըլլալ:

Այս պատմութիւնը միայն Միքին պատմութիւնը չէ, այլ քիչ բացառութեամբ բոլոր հայ երիտասարդներուն կեանքին պատմութիւնը: Աստուծոյ խօսքը, աղօթքը, Տիրոջ օրը և եկեղեցին բոլորովին զանց առնուած են դարուս երիտասարդութեան կողմէ, և անոնք փոխարինուած են վէպերու

ընթերցումով, սփորով, ժամանցներով և զուարճատեղիներով:

Որքա՛ն սխալ է խորհիլ, թէ կըրօնքը միայն ծերերուն և մանուկներուն համար է: Երիտասարդ մը որ կեանքի ասպարէզ կ'իջնէ, իր աղեւ ունենալով զանազան վտանգներ, ծուղակներ և փոթորիկներ, ի՛նչպէս կրնայ յուսով դիմակալել զանոնք և յաջողիլ կեանքի մէջ՝ առանց Աստուծոյ օգնութեան, և Անոր խօսքը իբր ճրագ ունենալու իր օտարութեան: Կարելի՞ է քալել սահելու տեղերէն՝ մութին մէջ, առանց լոյսի: Ի՛նչպէս մարդ կրնայ ապահով զգալ ինքզինքը, երբ կ'աշխատի խաւարին մէջէն կեանքի նաւը տանիլ առանց կողմնացոյցի, երբ մօայլ տմպեր չըջապատեր են զինքը: Զարմանալի՞ է որ ըսզմութիւ երիտասարդ կեանքեր նաւարեկութեան կը հանդիպին, կը կորսուին մարմինով և հոգիով:

Արդ, սիրելի ընթերցող երիտասարդ, և կամ դուն ո՛վ չափահաս որ արդէն կեանքի ճամբայէդ բաւական յաւաքացած ես, միշտ յիշէ՛ այս երազը և խորհէ, թէ ո՛ւսկից կ'ընթանայ քու ճամբողդ, դէպի ո՛ւր կը տանի քեզ այս ճամբան՝ որուն կը հետեւիս: Եթէ կ'ապրիս առանց Քրիստոսը ունենալու քեզի հետ, չես աղօթեր որ Տէրը ուղղէ քայլերդ, չես ուզեր որ Աստուծոյ խօսքը ճամբողդ լուսաւորէ, գիտցի՛ր որ խաւարին մէջէն կը քալես խորխափելով: Զգո՛յ՛, կրնայ ըլլալ որ անդունդին եզերքը հասած ես արդէն, քայլ մը եւս, անո կորսուած ես և կորսուած ես յուրեան: Շուտով դուն ալ ես դարձիւր ո՛վ սիրելի ընթերցող, քանի դեռ ուշ չէ: Այս երազը ընդունէ քեզի համար և մօնաւանդ երազողին նոր կեանքը ըլլայ քու կեանքդ ալ:

Խ. Թ. ՍԱՐԵԱՆ.

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց. — Հանեցի՜ք մեզի բացատրել թե ի՛նչ էր նշանակին Սր. Գրոց մեջ գործածուած «Սեյա», «Այեղուեա» եւ «Ամեն» բառերը:

Պատ. — 1. «Սեյա»: Այս բառը յիշուած է Սաղմուններու մեջ 71 անգամ, եւ 3 անգամ ալ «Մարգարէութիւն Ամբարշտի» մեջ: Կու գայ Եբրայեցերէն «սեյալ» բառէն, որ էր նշանակէ «դադար»: Երաժշտական նշանակ մը, որ երգեցողներէն էր պահանջէր դադարեցնել երգելը որպէսզի նուագախումբը առանձինն շարունակէ նուագել: Ոմանք էր խորհին թէ անիկա եկած է «սալալ» բառէն, դարձեալ իբր երաժշտական նշանակ զօրացնելու համար նուագախումբին ձայնը:

Ուրիշ իմաստ մըն ալ ունի, որ մեզ աւելի էր հետաքրքիր քան միւսները, եւ ան ալ սա՛ է՝ թէ ո՛ւր որ տեսնուի այդ նշանակը Սաղմուններու մեջ, էր պահանջէր ընթերցողին կանգ առնել եւ խորհրդածել նախորդ խօսքերուն վրայ հասկնալու համար թէ Սր. Հոգին ի՛նչ կ'ըսէր այն խօսքերով: Ահա թէ ինչո՛ւ Սաղմ. 9. 16 ին մեջ «նեկկայօն» բառը կցուած է «Սեյա» բառին, որ էր նշանակէ խորհրդածութիւն:

2. «Այեղուեա», բացագանչական բարդ բառ մըն է, երկու Եբրայեցերէն բառերէ շինուած: «Այեղու» էր նշանակէ «փառք տուէք», եւ «եա» էր նշանակէ «եհովա» կամ «Տէր»: Երկուքն միացած՝ կ'ըսէր «Այեղուեա», որ էր նշանակէ «Տէրոջը փառք տուէք», կամ «Փառք Տիրոջ»:

3. «Ամեն», հաստատ, հաւատարիմ, նշանակէ նշանակութիւններով: Յիսուսի տրուած անուններէն մեկն է, «Ամեն, հաւատարիմ եւ նշանակէ վկան» (Յայ. 3. 14): «Աստուծոյ խոստումները իր մեջ Այո՛ եւ Ամեն են» (2 Կոր. 1. 20):

Մեր Տէրը գործածեց զայն երբ կ'ուզէր խորունկ նշնանաւորել մը յայտնել եւ կ'սկսէր, «Ամեն, ամեն ամեն ձեզ» ըսելով: Աշխարհաբար մեջ, «նշանակէ, նշանակէ կ'ըսեն ձեզի» քարգնանուած է: «Ամեն» էր գործածուէր նաեւ երդումի պարագային ի նշան հաստատութեան կամ փաստի, թէ երդուելը պիտի չորժուի (3 Թագ. 1. 36) եւ (Թուոց 5. 22): «Ամեն» էր գործածուէր նաեւ ըսուածք հաստատելու ինչպէս կ'ըսէր աղօթքի պարագային (Նեեմ. 8. 6, 1 Մնաց. 16. 36): Մանաւանդ մեր Տէրոյ երկրի վրայ ապրած ասէն՝ հրեաներ իրենց ժողովներուն մեջ եւ ետքին քրիստոնէայ. ժողովներու մեջ ընտանեկան կամ անձնական աղօթքներուն՝ քրիստոնէաներ էր պատասխանէին «Ամեն»ով (Մատթ. 6. 13, 1 Կոր. 14. 16):

Ա.

ՊԵՇԻՆՃԻ ԻՆՃԻԼ



Տէօրթ Ինճիլէրի, Խանի Մատթէոս, Մարկոս, Դուկաս վէ Յովհաննէս Ինճիլէրինի պիւրիստինիզ, Լաքին սիւզին տալիքէնիզաէ պուշլարըն հէր հանկը պիւրիստինտէն չօզ զիյատէ օգուշուլան պաշգու պիւր Ինճիլ վար տըր, վէ օլ Ինճիլ միւսինլէրին շախալարը վատըթատըլէ զահիբ օլուպ, էյի Խաթա ֆէնա օլարագ Յիսուս Քրիստոսուն թէֆսիրի պուշլուան սիզին Ինճիլէրինիզ տիւր: Վէ պիւր գաշ ճիհէթլէրաէն սիզին Ինճիլինիզ պուշլարաւան ֆարգըլ տըր: Էլվէլ էմրոտ սիւզին Ինճիլինիզ ումուլըն լիսանընտա եազըլմըշ տըր: Անը հէր քէս. օգուլապ պիւրի:

Պիւր քիմսէ օլ պիւր Ինճիլէրի օգուլաթաթաթագ տէրէնէտէ ճահիլ օլապ պիւր իսէտէ, հիւ պիւր քիմսէ սիզին

Ինձի ինքիդ օգույս մտայաճադ տէրէճէ-
տէ ճահիլ օլումադ, Պոռնտան պիր գաւ
սէնէ էվվէլ Փրէնսթըն Գոլէճի թալէ-
պէսինաէն պիրիսի՝ քէնտիսինին պիր
միսիօնէր սըֆէթիլէ էճնէպի պիր
տիյարա կէօնտէրիմէսինի թէքլիֆ
էթտի: Պու թալէպէ քեմաիլէն էյի
պիր քիմաէ իտի իսէտէ, թահսիլի իմ
խուսուսուհտա իլէրիտէ օլում պիր
քիմաէ օլումադընտան, քէնտիսին
միւսթադպէլ սայ ու զայրէթի իլէ
տաիրէսինէ հէթիշտիքտէ, հէրլիլէրին
լիսանընը էօյրէնմէք խուսուսընտա
կիւճլիւք չէքտի: Լաքին սառէտիլ
հէրլիլէր անըն սէօզլէրինի անլայա-
մայօրլար իտի իսէտէ, անըն թավր ու
հարէքէթլէրինի անլայապիլիլէր ի-
տի: Կիւնիւն պիրիսիտէ հէրլիլէր քէն-
տիլէրին տաէթինէ կէօրէ, պիր հալ-
գա թէշքիլ էտէրէք վէ հէրէ օթուր-
մուշ օլարադ, վաիզլէրինաէն պիրի-
սինին սէօզլէրինի տինլէրլէր իքէն,
մէյտանա «Բրիսթիան օլմագլըդ նէ՞
տիր» սիւալը չըգտը: Հիշ պիրիսի
պու սիւալա գանա՝աթպախշ պիր ճէ-
վապ վէրէմէտի իսէ տէ, սօնրա պի-
րիսի փարմադըլէ օլ կէնճ միսիօնէրի
կէօսթէրէքէ, «Բրիսթիան օլմագլըդ
օլ միսիօնէր կիպի եաշամագլըդ աըր»
տէյու ճէվապ վէրտի:

Պոռնտա Կիշ պիրիսի Մա-
թէս, Մարկոս, Ղուկաս վէ Յովհան-
նէս Ինձիլլէրինի օգույս մտա իտի ի-
սէտէ, ճիւմլէսի տախի միսիօնէրին
Ինձիլլէրի օգույս պիլիլէր իտի: Միւ-
մինլէրին Ինձիլլէր ումումըն լիսանըն-
տա եազըլմըշ աըր: Պօղոս առաքեա-
լըն տէտիլի կիպի, «Հէփ տաէմլէր
թարաֆընտան թանըլապ օգուըր օ-
լան» Ինձիլ սինիդ: Սիզին իշ մահա-
լընըգտաքի խըտմէթճի պուշլարըն ի-
չինտէ տիր: Օ՝ տիւքիանընըզը անճադ
սիւփիւրիւյօր տէյու զանն էթտիլի-
նիդ զէման վէ սապահլայըն հէրարէթ-

լի, հախօտ թաթլը սէօզլէր սէօյլէյէ-
րէք, օտանըզա կիրտիլինիդ զէման օ
սիզի օգուր: Մաթպախ խըտմէթքեա-
րընըզ տախի անլէրին իչինտէ տիր:
օ սիզի օգույօր տէյու հիշ զանն էթ-
մէտիլինիդ զէման օգուր: Քէզալիք
սիզին էվլաալարընըզ վէ գօմշուրա-
րընըզ տախի սիզի օգույսնլար գիւմ-
րէսինէ տախիլ տիր: Սիզին Ինձիլի-
նիդ ումումի լիսանտա եազըլմըշ աըր:

«Աւեսաքեր»

Օ ԶՈՒՅՈՒՐ ԷԹՏԻՅԻՆՏԷ, ԱՆՏԷՆ ԽԷՃԻԼ ՕԼՄԱՅԱԼԸՄ

Էնճամ էպէտի թախթա օթուր-
մագտա օլան Զաթը Ճէլիլ ազիմ
գուտրէթ վէ ճէլիլ իլէ իքինճի տէ-
ֆա օլարադ գուհուր էաէճէք տիր, Ա-
լէուհա: Հէր թարաֆտան պիւթիւն
վազաալար խապէր վէրիյօր քի, Բապ-
պըն կիւնիւ եազըն աըր, հէման գա-
փուլարտա, վէ զիյառէսիլլէ սիւարթլէ
կէլիյօր, հէր հանկը պիր կիւն հա
կէճէ նէօվպէթինտէ գուրադարմըզ
գուվվէթլի պիր պօրու սէսի իչիտէ-
պիլիւր «Իշթէ կիւվէյի կէլիյօր, Անը
իսթիգպալէ չըգընըզ» տիլէճէք: Ա՜ն, նէ
մութլու կիւն, մէսուա կիւն, քի հա-
րէթ իլէ պէքլէմէքտէ իդ, Բապպ քէն-
տի մուգտառէսլէրինտէ մուազզէզ վէ
ճիւմլէ միւմիւնլէրտէ հայրէթպախշ
օլմագ իւզրէ կէլէճէք (2 Սէլ. 1. 9):
Էյ պու սաթրլարը օգույսն մէօթէրէմ
տօսթոււմ, Ալլահըն Քէլամընտ տիգ-
գաթ էյլէյէլիմ, Օ՝ եանի Բապպ Յի-
սուս իքինճի տէֆա օլարադ գուհուր
էաէճէք տիր, էյէր հազըր տէյիլ իսէն,
վազ օլուհան պէյարէթէ «Բապպ Յի-
սուս Բրիստոսա իման էք վէ խէլաս
պուլանագաքըն» իման վէ իթաաթ էթ-

մէջ իսէն, տիրել, օ կրպիւէր իչիւն, Ալլաճըն Բէլամը նէ պուշուրըր, «Անըն հուզուրընտան վէ ճէլալընըն գուվ-վէթինտէն պուշուր օլ կիւնտէ քէնտի էպէտի հէրաք հիւքմիւնիւ չէքէճէքլէր տիր» (2 Սել. 1. 10): Էյ «տրգիա-կան» տօթլար, սիզ տախի մէսլէյի-նիզի էյիճէ տիւշիւնիւնիւզ, թիթրէյի-նիզ վէ սիզի տաթըն տախի Բապպը ինքեար էթմէյինիզ, հէր չէյէ գոտիր Ալլաճըն Բէլամընա չիւփիէ էտիպ Անու գոմմ էթմէքտէն վէ եա սնտէն թէն-զիւ էթմէքտէն գօրգուպ թիթրէյի-նիզ, օլմայա քի Ալլաճ տախի սիզի Հայաթ Բիթապընտան վէ մուգատտէս չէհիրտէն չըգտուր, նէ հէյպէթլի պիր կիւն օլաճագ:

Բապպ գուհուր էթտիյինտէ իքի սընըֆ միւմինլէր օլաճագ.—

(1) Խէճիլ օլաճագ միւմինլէր վէ
(2) Խէճիլ օլմայաճագ միւմինլէր: Պու նօգթալար պիզիմ իչիւն զու-յէթ ազիմ վէ հայաթի օլան հագի-գաթլար տըր: Պիզ ճիւմլէմիզ, Յիսու-սըն գանընտա երյգանըպ տաթըն տ-լընտնլար, էօմրտէ գտիֆ վէ գուվ-վէթլի, Օ զուհուր էթտիյինտէ Անըն սէմալի հուզուրընտ չըգաճաղըզ, լա-քին հաճիլը սընըֆա տիտիզ, ութու-նտնլար եօգտա Անըն հուզուրընտա ճէսարէթլէ տուրաճագ զլանլար սընը-ֆընտ մը: Իմտի տուա թուհու իլէ տթիտէքի պազը նօգթալարը մէչդ է-տէրէք քէնտիմիզի թէֆթիչ էտէլիմ:

Անըն գուհուրընտ Խէճիլ օլմայա-նագ օլան միւմինլէր:

1. Տուսա ույանըզ օլան միւմին-լէր.— Պիզիմ տուա էօմրիւմիւզ նա-սըլ տըր: Պիզ Բապպըն հուզուրընը հէր կիւն վէ հէր վազըթ կէօնէնմէք-տէ մի իզ: Անըն իլէ օլան միւշարէ-քէթիմիզ պիր փէտէր վէ էվրտա տ-լազասը վէ միւշարէքէթի կրպի մի տիր: Պիզ հէր վազըթ հէր տուա վէ

նիյաղլէ թուհուա տուա էտիյօր մը իզ, ճիւմլէ մուգատտէսլէր, իչճիլէր վէ կիւնտէքեար տիւնտա իչիւն Բապպըն հուզուրընտա տուրույօր մը իզ:

Ամբակում ֆէյլամպէր իլէ պէ-րապէր տիյէլիմ «Նէվպէք եերիմէ տուանաղլըմ» գալայը հըֆը էտէլիմ, Բապպ տէր «Կէլմիմէսէ իմ պէն»:

2. Մուգասսէս վէ դալիպ էօմր եաճայան միւմինլէր Խէճիլ օլմայա-նագլար Օ՝ գուհուր էյլէսիյինէ.—

«Մուգատտէս օլուհըզ զիրա պէն գուտտուս իմ», «մուգատտէս օլան տահա մուգատտէս օլուհն»։ Ալլաճ պիզի գուտտիյէթէ տալէթ էյլէտի, պու նապիաք տիւնտա մուգատտէս պիր էօմր եաչամագ միւմին տիր, զիրա հէմ տալէթիմիզ պու տըր վէ հէմ տախի պիզէ վէրիլէն զիգըյմէթ իամլէրտէն պիրի պու տըր «մուգաս-սէսլէր»։ պիզ պու տլէմին կիտիյինէ ույմալը տէյիլիզ, պիզիմ թէֆէքթիւր-լէրիմիզ, գօնուշուգ վէ ճիւմլէ թալը ու հարէքէթլէրիմիզ մուգատտէս օլուպ ճէսէտ, ճան վէ թուհուլը Բապպըմը-զըն զուհուրընտ տէյին պիլէ գուսուր հըֆը օլուհմալը տըր: Պու տիւնտա էօմրլէրինի փաք սաղլայանլար իչիւն Յիսուս նէ աճաիպ վառտա պուլու-նույօր: «Սարգիկէտէ պիլէ էլպիսէլէ-րինի քիրլէթմէմիչ սէնին պիր գաչ քիմսէլէրին պուլուշուպ պուշուր պէ-նիմ իլէ պէրապէր պէյազ էլպիսէ իլէ կէզէճէքլէր, չիւնք լայնք տըրլար» (Վահի 2. 4): Բէզա զալիպ պիր էօմր եաչամագ պիզիմ տալէթ վէ իմթիյա-զըմըզ տըր: «Ղալիպ օլանա պէնիմ ի-լէ թալիթըմտա օթուրմաղը իհաան է-տէճէյիմ (Վահի 3. 21):

3. Մուհապպէրլէ օլու միւմինլէր ապլա Խէճիլ օլմայանագ սըր:

«Մուհապպէթտէ գօրգու եօգ տըր, մուհապպէթտէն զայրի պիր եօլ իլէ եէքտիկէրինիզէ պօրճու օլմայընըզ»:

ի թիրազ վէ հիւքմ րուհընտոն սագը-
նալըմ արթըզ, պուռնար էօմրիւմիւ-
զիւ չիւրիւտիւպ՝ դանգրինա կիպի
եալաշ եալաշ պիզի եիյօր, Բապպ
կէլմէյինճէ հիչ պիր չէյի հիւքմ էթ-
մէյինիզ, էմրինէ միւթի օլալըմ: Մու-
հապպէթ էպէտէն պազի տիր: «Ճիւմ-
լէ էվլատ Ուլլահը սէվէլիմ, շու տա-
վէթ վէ ինթիխապըմըզա լայըզ օլա-
լըմ»:

4. Ճանլար գազանան միւմիճիւր,
Բապպ զուհուր եթսիյիճէ, հուզուրնիսա
ուրանմայանագլար:—

Ա՛հ սէվկիւլիւլէր, իշթէ պիզիմ
պազի գալաճազ օլան իշիմիզ պու-
տըր: Ճօն Ուէսի տիյօր. «Սիզի» ճան-
լար գազանմագտոն զայրի պիր իշի-
նիզ եօզ տըր», էֆէնտիմիզ հագգընտա
օգուրըզ քի «չօզ օղուլլար ճէլալէ
կէթիրտիյինտէ . . . » (Իպր. 2. 10):
Աճէպա պիզ գա՞չ ճանլար ճէլալէ եէ-
թիշտիրտիք: Պօղս կիպի տիյէպիլի՞ր
մի իզ. «Իւմիւտիւմիւզ, մէսէրէթի-
միւզ, իֆթիխար թաճըմըզ քի՞մ տիր:
Բապպըմըզ Յիսուս Քրիստոս զուհուր
էթտիյինտէ Անըն հուզուրընտա հէմ-
ան սիզ տէյի՞րմիսինիզ» (1 Սէլ. 2. 19):

Պիզ նէ՞ գատար ճանլար Սոյանա
իրշատ էյլէտիք (Դան. 12. 3): Սէվկիւ-
լիւլէր, պէլքի պիզ էօմրիւմիւզտէ,
սաման նէվինտէն օլան իշէր իլէ օլ-
գատար մէշղուլ օլտուզ քի վազթը-
մըզ գալմատը ճանլար գազանմագտոն:
Ա՛հ էյէր պէօյլէ իսէ, տէրհալ ույանա-
լըմ, պազի գալան կիւնլէրիմիզտէ
ճանլար գազանմագ իշինէ սոյ ու զայ-
րէթ էտէլիմ, քի իշիմիզ էպէտիյէթին
տթէշ իմթիհանընտ տայանապիլէն
նէվտէն օլուպ միւքեաֆաթա նաիլ
օլարագ շու սէօղլէրի Մէլիյիմիզին
տուտագլարընտան իշիտէլիմ. «Աֆե-
րին էյի վէ սասըզ գուլ, էֆէնթինի
եհնլիյինէ կիր»:

Կ. Յ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

ՏՕՍԹԱՆԷ ԹԵԼԳՈՒՆԱԹ

4. Թեսլիմիյէք.— Հէր սապա՞ ու-
յանըր ույանմագ Սւլտհըն սանա էլինի
ուզատարագ տէտիյի շու սէօղլէրի
ֆէնմ էթմէյէ չալըշ, «Ֆիհապիզէ ար-
ղու էտիյօ՞րմուսըն քի պու կիւն զար-
ֆընտա սէնի հըֆզ վէ սիյանէթ էտէ-
յիմ», վէ սէն պու չէֆիզ վէ սէմալի
Փէսէրէ սօղրու էլլէրինի գալարըզ
տէ, «Էվլէթ, էվլէթ պէնի պու կիւն
զարֆընտա ինտա վէ իրշատ էթ վէ
պանա մուհապպէթինի իպրագ էյլէ,
քետմիլէն սանա միւթի օլաճաղըմ»:

Ալլահըն մուհաֆըզ գօլու թաճ-
թընտա միւմքի՞ն մի տիր քի սէն մէ-
յուս, պիհուզուր օլուպ խաֆլ ու խա-
շիյէթ էտէսին: Խայր, Ալլահ սէնին
թաշըյապիլէճէյինտէն ֆաղլա նէ թէճ-
րիպէյէ նէ տէ քէտէրէ միւսա՞տտէ
էթմէյէճէք տիր: Իմտի կիւնիւնի րա-
հաթ վէ սալիմ պիր սուրէթաէ կէ-
չիր, չիւնքի ֆէտէրին տայմա սէնին
եանընտա տըր, պիր վալտէնին տայ-
մա քէնտի մատուընըն եանընտա
պուլունաղըզ կիպի:

Եալընըզ պիր չէյէ՝ եանի Ալլահը
խօշլանտըրմայան չէյլէրի իճրա էթ-
մէմէյէ տիգգաթ էթ, օլզլման կէօրէ-
ճէքսին քի նաաըլ Ալլահ սանա ա՛խա
օլան չէյլէրի՝ մատաի մէնֆա՛թլարը,
իշթիրագը հիտի, տիւնեալի գայղու-
լարը, թէրթիպ վէ թէվճիհ էտէճէք:
Ափանսըզ սանա վուգու պուլաճագ օ-
լան նուր իշիւն հայրէթաէ գալաճագ-
սըն, վէ քէզա էմէք ու զահմէթինին
նէթիճէսի օլան աճաիպ սէլամէթ
իշիւն:

Իմտի թէճրիպէյի, խաաթաղըզ
վէ սանա օսոնճ սէպէպի օլան չէյլէ-
րի, մահրումիյէթլէրի, տաալէթսիզ-

լիցի խօսամետի իլէ գապուլ էթ . . .
անլէրին ճիւղմէսի տնճագ Ալլահն
էլիլէ տէլալէթ օլունմուշ օլարագ
կէլէպիլիլլէր, վէ պու չէլլէրտէն հա-
լընը մագսէտ՝ տէրունտէթի Րուհու-
ինճիտէճէք պատգը խտթալարը թաթ-
հիր էթմէք տիր:

Սէնին վալիտէն մահդա սոնա է-
լէպ սէպէպի օլմագ իլիւն մի տճը ի-
լաճ իչիրիր:

էյէր վաղիֆէն աղըր իսէ, կէրէք
տնըն կիւճլիլլէր վէ կէրէքսէ թառ-
սըղ թուզսըղ օլմասը հիսսի իչիւն
գալպինի Ալլահա ըէֆ էտիպ աէ, Եա-
րապպ պանա Եարսըմ էք, պատէհու-
տնաէ տէվամ էթ հաթթա տնը նոգ-
սոն պիր թարղտա իճրա էտիյօր իսէն
պիլէ: Շոյէտ միւպէճմ վէ զայրի
մու՛այէն պիր խաֆլ ու զօրգու սա-
նա թէարրիւղ էտիպ ճանընը գօյու-
պիր գարանլըղ իսթիլա էտիյօր իսէ,
գօրգուսընտոն հէյպէթէ տիւշմիւշ
պիր չօճուղ նասըլ վալիտէսինէ ֆէր-
ետա էտէր իսէ էօյլէ Ալլահա ֆէրետա
էյլէ:

Էվվէթ, էյ սէվկիլլիւ օգուլան,
տաիմա սէլամէթի հըֆղ էյլէյիպ Եէվ-
միյէ վաղիֆէլէրինաէ սիւքիւթ պիր
թարղտա տէվամ էթ, տնաէն աէ զի-
յատէ տաիմա մէսրուր օլ վէ նիչիւն
պէօյլէ օլմասըն:

Սէնի սէվէն վալիտէն արթըղ Եօգ
իսէ վէ սէն մուհապպէթէ հասրէթքէշ
իսէն, Ալլահ սոնա պիր վալիտէ կիպի
օլաճագ: Սոնա Եարտըմ էտէն պիրա-
տէրին Եօգ իսէ, վէ սէն աէ Եարտըմ
օ գառար միւհթաճ իսէն, Ալլահ սէ-
նին պիրտաէրին օլաճագ: Սէնի թէ-
սէլլի էտէն տօթթլարըն Եօգ իսէ վէ
թէսէլլիյէ տէ չօգ ինթիյաճըն վար
իսէ Յիսուս սէնին տօթթուս օլաճագ:

Ալլահա տօղրու տաիմա մասուլմա-

նէ վէ սաֆի պիր մէվգի հըֆղ էյլէ վէ
վալիտէնէ տ'րղ էթտիյին կիպի հէր
չէյի Անա արղ էթ, Անա տօղրու քէն-
տի փլանլարըն, կիւճլիքլէրինի, մէ-
սէրլէթինի պիրտաէրինէ սէօյլէյէճէ-
յին իթիմաա իլէ սէօյլէր մէվգիինի
թութ:

Հիսս էթտիյին ճիւղմէ մէսուտի-
յէթի իպրաղ էտէն մուհապպէթամիղ
սէօղլէրի, Ալլահա մէրպուլէն վէ ի-
թիմաաէն Եաշաթարագ ֆիքրինաէ
հըֆղ էյլէ, վէ սէպալէթինին տօթթու-
նա տնլէրի սէօլտիյէն կիպի տնլէրի
Ալլահա սէօյլէ:

Մասուլմանէ տ'յիճէնապ պիր գալպ
թաշը, պիր գալպ քի հէր օլանըն Ալ-
լահա վէրիր: Պրագ քի Օ՝ տէրունին-
տէթի վէ էթրաֆընտաթի չէլլէրտէն
ազաա օլարագ իսթէտիյինի ալսըն:
Անըն իսթէտիյի չէյի իսթէ, վէ Անըն
իրատէթինէ մուվաֆըղ օլան չէյի
թալէպ էթ, վէ էմր էթտիյի հիչ պիր
չէյի միւմքինսիղ տ'աա էթմէ:

Պու միւթէլա՛տարտա թէսէլլի
էտիպ միւսթէրիհ զըլտն իւնսիր
կէօ՛րմէյօրմուսըն: Եաշաթըգճա տահա
էյի տնլաթաճագսըն քի, հագիպի մէ-
սուտիյէթ՝ Խալընըղ Ալլահա թախսիս
էտիլմիշ վէ պիւթիւնէն Անըն տէլա-
լէթինէ թէրք էտիլմիշ էօմրտէ պու-
լունըր:

Խայր, խայր, Ալլահըն իրատէթի
տէյիլ իսէ քիմնէ սանա զիյան իրաա
էտէմէղ, վէ շոյէտ Օ միւստ'ատէ է-
տիյօր իսէ սապրլը վէ միւթէվաղը օլ-
աղլա էյէր ճանըն տճըլըյօր իսէ, լա-
քին տաիմա սէվ վէ պէքլէ . . . միւ-
ղաթաղալար կէչէճէք լաքին սէնին օլ-
մագ իւղրէ Ալլահ իլլէլէպէտ պագի
տուլաճագ:

ԵՐԷՅ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՋԷ

Թեւեւ Աստուծոյ համար.— Այս խորագրին տակ աներիկեան քերթ մը կը գրէ. «Գրիպըն էն Միքընէրի Էլայընս»/ի որ ունի երկու հազար միսիոնար եւ տեղացի գործիչներ, կայսրամենեան մեկն է Արեւելեան Տիւղ Պորսկոյի Էլիօ Քիլըն շրջանը: Հոս «Էլայընս»ի միսիոնարները կը գործեն մարդակեր Տայաֆ ցեղերուն մէջ: Ի՞նչ շրջանը հասնիչ կը նշանակէր հինգ շաբաթ ճամբորդութիւն Պաշանկան ըստած սրբնաց եւ վստեղանոր զեւն ի վեր, որուն զոն զացած են բազմաթիւ մակուկախորհեր: Քանի մը անիս առաջ «Էլայընս»ի կեդրոնակէն Նիս Եորֆի մէջ, իր ֆարսուդարը Վեր. Է. Զ. Սեիս յայտնեց որ այժմ Աստուծոյ խօսքը կ'երթայ Պորնիօ արդիական միջոցաւ մը, այսինքն ջրօղանաւով:

Պայտներ միսիոնար մը «Էլայընս»ի պաշտօնեաները կը հաւնոգէ ըսելով քէ. «Գիւտերն դարը, եւ ներկայ միսիոնարական գործունեութեան դարը զուգընթաց են»: Ասոր վրայ ընկերութիւնը կը դրկէ հոն օղանաւ: Աներիկացի օղանաւորդ մը կը վարձուի քոնի սորվեցնելու Տայաֆներուն միսիոնար Վեր. Զ. Ի. Ֆիսֆին: Քիչ յետոյ սոյն միսիոնարը կ'ստանայ Աներիկեան եւ Հոլանտական վիսայական օղանաւորդութեան»: Ֆիսֆ իր կարգին կը սորվեցնէ քոնիը Վեր. Տ. Ս. Եուեղին:

Հինգ շաբաթուան ճամբորդութիւնը այժմ կը կատարուի երկու ժամուան մէջ: Հինգ հազար Տայաֆներ դարձի եկած են, որոնցմէ շատեր ջրօղանաւին գործածութենէն ի վեր, որուն միջոցաւ միսիոնարական այցելութիւններ յաճախակի տեղի կ'ունենան հիստ: Մեծապէս ֆարաշերտած այս յայտնութենէն, եւ մահաւանդ Չիւնացի եւ Հար. Աներիկացի միսիոնարներուն ունեցած ժամանակի եւ դրամի խնայողութենէն, Մր. Սեիս կը նախատեսէ մեծ կարելիութիւններ միսիոնարական գործին մէջ օղի ճամբով: Ան յայտարարեց որ «Էլայընս»ը մօտ տեսնեն

պիսի ունենայ երրորդ օղանաւորդ մը»:

Մենք ալ ուրախ ենք ըսելով օգտագործումը այս հրաշալի գիւտին Տերոյը այգիին մէջ: Ափսո՛ս որ այժմ ան կը գործածուի շայնօրհն մահ ախտերու, փոխանակ կենաց խօսքը տանելու հետաւոր վայրեր:

§ Սովիէք Ռուսիոյ հոգեւորականներուն աստուծոյն եւ բանաստեղծին ի վեր բազմաթիւ կիներ մէջնեկ միսիոնար դարձած են: Անոնք իրենց յիշողութեան մէջ կ'առնեն անբողջ Դոր Կսակարանը: Տունէ տուն կ'այցելեն, կը ֆարողեն, միտնութիւն եւ հաղորդութիւն կը կատարեն: Եւ երբ գործի վրայ բռնուելով սրգելափակուին, միեւնոյն գործը կ'ընեն յանձնարեալներուն միջեւ, կը գրէ «Հիրդը տը Հոյինեա» քերթը:

§ Բրիտանական եւ օտար Սբ. Դրբի ընկերութեան մեկ ներկայացուցիչը մօտերս Հօնֆօլի այցելած է: Հոն կը հանդիպի «պիսգուիթ»ի գործարանատէրի մը, որ չորս ընգուով — չիւնարեն, ճաքոններեն, մարայերեն եւ անգլերեն — քերթիկներ տպած է, որոնց վրայ գրուած էր, «Յիսուս ըսաւ, ես եմ կենաց հաղթը»: Խրատանջիւր տուիին մէջ կը զետեղէր սոյն քերթիկներէն եւ կը դրկէր զանոնք Չիւնացեանի եւ Հնդկացիին տեղէն կողմը: Բազմաթիւ նախակներ ստացած էր անեւ կողմէ, որոնք կ'ուզէին աւելի տեղեկութիւն Յիսուսի մասին: Ի պատասխան այս նախակներուն ան կը դրկէր օրինակ մը Յովհաննոս Աւետարանէն անոնց կցելով իր անձնական վիշալութիւնը այդ Աւետարանին ազդեցութեան մասին իր կեանքին վրայ, կը գրէ «Լիբրերի Տայնէս»:

Ահաւայիկ ինքնասէպ գործ մը Աստուծոյ համար: Հոգիներուն համար բռնու սերը մարդը կը մեղ հմարտանքութեան ինչպէս, անտարակոյս այդ սերը մկած էր այս գործարանատէրը:

ԱՌԱՏՄԱԵՌՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՄԱՐԴՈՅ ՇԵՏ

Աստվարը շէրքիս՝ կը գրէ. «Յիսուս Քրիստոսի Եկեղեցւոյն յառաջդիմութեան առջեւ մեծապէս արգելի՛ր՝ եկեղեցիի անդամներուն անձնասիրութիւնն է: Մեր ժեյով Աստուծոյ սալ Իր բաժինը իրենց ունեցածին՝ կը դանդաղեցնեն Իր քաղաւորութեան յառաջխաղացումը»:

Պատմութիւն մը կայ կաթնալաւանի մը մասին: Այս մարդը հազազործի մը կողմէ դասի կը ֆաշուի, որովհետեւ իր մեկ շիրմոց կարագը երկու ունկ պահաւ կը գտնէ:

Դասաւարութեան ժամանակ պաշտպան փաստաբանը կը հարցնէ իր պաշտպանեալին.

— Դուն կշիռք կը գործածե՞ս կարագ ծախելու ժամանակ:

— Անշուշտ կշիռք կը գործածեմ, կը պատասխանէ անբասանեալը:

— Ի՞նչ տեսիլ չափ է ձեր գործածածը, կը հարցնէ փաստաբանը:

— Մինչեւ մօտեւ իմ չափս կը գործածեի. սակայն քանի սկսեմ եմ այս

հաշագործին հաց առնել. իր մեկ շիրմոց նիւսնակը՝ ինծի աւելի հեշտ եկաւ գործածել, հիմա փոխանակ իմինս, այս մեկ շիրմոց նիւսնակը կը գործածեմ...:

Աստուած մեզի կու տայ մեր աղօթքներուն պատասխանը, մեր կշիռքովն ու մեր չափովը: Ան մեզի կը ներէ «ինչպիսի որ մենք կը ներենք ուրիշներուն»:

Եթէ մեր սիրտեր մեզ չպատասխանեն Ան ալ մեզ չպատասխանէ»:

Ինչ չափով որ չափենք, միեւնոյն չափը կը գործածէ մեզի համար:

«Մարդ կայ որ ցրուելով կ'աւելցնէ, եւ մարդ կայ որ չափէ դուրս կը խնայէ քայց կարօտութեան կը հասնի»:

«Բարեւար անձը պիտի գիտնայ, եւ ան որ կ'ոռոգէ ինքն ալ պիտի ոռոգուի»:

Բոլոր տառանդները վճարեցէք եւ ահա Ան ձեր վրայ օրհնութիւն պիտի քափէ: Աստուծոյ հետ առաստաղուն եղիր եւ Ան պիտի ըլլայ առաստաղուն ֆելի համար:

ՏՈՒԹ. Ճ. ՉԷՒԻԼԷՆ.

ՆՈՒՐԻՔԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեղւոյս Հոգեւոր Եղբայրութեան երիտասարդները կը նուիրեն 50 Ե. Դ. «Աւետարանի Ձայն»ի Ֆօնտին:

Մի ոմն նոյն նպատակին կը նուիրէ 10 Ե. Դ.:

Մեր շնորհակալութիւնները նուիրատուներուն:

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եգիպտոս՝	25	Ե. Դ.
Ամերիկա՝	1½	Տոլար
Ֆրանսա եւ Սիւրիա՝	30	Ֆրանկ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր դրամական առաքումներ. յղուածներ եւ քրքակցութիւններ պէ՛տ է հասցեագրուին հետեւեալ կերպով.—

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen — Shoubra, CAIRO (Egypt).